

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՏՐԱՍՍԱԴՐՎԱԾ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ

Ծրագրի նպատակն է նպաստել Արցախի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների ֆինանսավորման հետ կապված հիմնախնդիրների հաղթահարմանը՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների մատչելիություն:

Պետական ֆինանսական աջակցությունը տրամադրվում է այն շահառուին,

- ով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն,
- ով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտավորություն պետության կողմից ստեղծված հիմնադրամների նկատմամբ,
- ով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտավորություն տվյալ գործունեության վայրի համայնքային բյուջեի նկատմամբ,
- ում տարեկան շրջանառության ծավալը՝ ըստ ՏԳՏԴ (տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ) իմբի և աշխատողների թվաքանակը չի գերազանցում.

Հ/Հ	ՏԳՏԴ խումբ	Գործունեության տեսակ	Շրջանառության տարեկան ծավալ /մյն դրամ/	Աշխատողների առավելագույն թվաքանակը /մարդ/
1	B08, B09	Հանքագործական արդյունաբերության և բացահանքի շահագործման այլ ճյուղեր, հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն	200.0	100
2	C	Մշակող արդյունաբերություն	չի սահմանվում	100
3	F	Շինարարություն	300.0	50
4	G	Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	300.0	30
5	H49, H50, H51	Ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում խողովակաշարերով, ջրային և օդային տրանսպորտի գործունեություն	չի սահմանվում	
6	H52	Պահեստավորում և տրանսպորտային օժանդակ գործունեություն	չի սահմանվում	
7	I55	Կացության կազմակերպում	100.0	
8	I56	Հանրային սննդի կազմակերպում	50.0	
9	J58	Հրատարակչական գործ	100.0	
10	J62	Ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում	չի սահմանվում	

11	J63	Տեղեկատվական ծառայությունների մատուցում	չի սահմանվում
12	Q86	Առողջապահություն	չի սահմանվում
13	S	Սպասարկման այլ ծառայություններ	30.0

- ով չունի Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2008 թվականի փետրվարի 21-ի թիվ 04 որոշմամբ հաստատված «ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման մասին» կարգի շրջանակներում սուբսիդավորվող վարկ:

Պետական ֆինանսական աջակցությամբ տրամադրվող վարկային միջոցները պետք է ուղղվեն.

- անշարժ գույքի կառուցմանը,
- անշարժ գույքի վերանորոգմանը,
- նոր սարքավորումների, տեխնիկայի ձեռքբերմանը (արտադրական հզորությունների վերազինում), նոր տեխնոլոգիայի ներդրմանը,
- արտադրության ամսաթվից մինչև 5 տարեկան սարքավորումների, տեխնիկայի ձեռքբերմանը,
- շարժական գույքի, կահավորանքի ձեռքբերմանը,
- շրջանառու միջոցների ֆինանսավորմանը:

Պետական ֆինանսական աջակցությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող **վարկի ընդհանուր պայմանները.**

	Չափանիշ	Պայման*
1.	Վարկի արժույթը	ՀՀ դրամ, արտարժույթ
2.	Վարկի առավելագույն տոկոսադրույքը	ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք + 9 տոկոսային կետ /ՀՀ դրամի դեպքում/ ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք + 5 տոկոսային կետ /արտարժույթի դեպքում/
3.	Սուբսիդավորման առավելագույն ժամկետը /ամիս/	60

**Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին տրամադրվող առևտրային վարկերի առավելագույն գումարները, սուբսիդավորման առավելագույն չափերը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգման տես հավելվածում*

Մշակող արդյունաբերության, կացության կազմակերպման և սպասարկման այլ ծառայությունների ոլորտներում Արցախի Հանրապետության շրջանների սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման չափն ավելացվում է 10 տոկոսով և, անհրաժեշտության դեպքում, կարող է տրամադրվել երաշխավորություն Հիմնադրամի կողմից:

Կացության կազմակերպման և հանրային սննդի կազմակերպման ոլորտներում Ստեփանակերտ քաղաքում գործունեություն իրականացնող ՓՄՁ սուբյեկտներին անշարժ գույքի կառուցման նպատակով տրամադրվող վարկը չի սուբսիդավորվում:

Պետական ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով շահառուն Հիմնադրամ է ներկայացնում հայտ՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

➤ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի, հիմնադրի (հիմնադիրների), անհատ ձեռնարկատիրոջ անձը հաստատող փաստաթուղթը,

➤ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի, հիմնադրի (հիմնադիրների), անհատ ձեռնարկատիրոջ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքը,

➤ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված պետական գրանցման վկայականը կամ պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը,

➤ իրավաբանական անձի կանոնադրությունը,

➤ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

➤ գործարար ծրագիրը,

➤ դիմում՝ հայտը ներկայացնելու պահին Հիմնադրամի՝ ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրի շրջանակներում սուբսիդավորվող վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը Հիմնադրամի կողմից դադարեցնելու վերաբերյալ,

➤ գործունեության վայրի նկատմամբ շահառուի իրավունքների պետական գրանցման վկայականը,

➤ գրավադրվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը,

➤ ապահովություն հանդիսացող գույքի՝ մասնագիտացված կազմակերպության կողմից կազմված գնահատման նախնական հաշվետվությունը,

➤ շինարարական աշխատանքների իրականացման դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից հաստատված նախագիծը, շինարարության թույլտվությունը, լիցենզավորված կազմակերպության կողմից կազմված նախահաշիվը,

➤ հարկային մարմնի կողմից հաստատված՝ շահառուի վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունները (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվարկ տարեկան եկամուտների մասին, իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, դրամական հոսքերի մասին հաշվետվությունը),

➤ տեղեկանք հարկային մարմնից՝ ունեցած հարկային պարտավորությունների վերաբերյալ,

➤ տեղեկանք տվյալ գործունեության վայրի համայնքային բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց պարտավորությունների մասին,

➤ տեղեկանք պետության կողմից ստեղծված հիմնադրամների նկատմամբ ունեցած ժամկետանց պարտավորությունների մասին,

➤ այլ անհրաժեշտ փաստաթղթերը:

Հիմնադրամը հայտը մերժում է, եթե՝

- շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին.
- շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում պետական ֆինանսական աջակցություն ստանալու համար սահմանված ընդհանուր պայմաններին.
- շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են ոչ արժանահավատ տվյալներ.
- շահառուի ներկայացրած գործարար ծրագիրը Հիմնադրամի հիմնավոր կարծիքով անհրատեսական է.
- լրամշակման ենթակա հայտում առկա թերությունը տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում չի վերացվել.
- շահառուի հետ փոխկապակցված անձը Հիմնադրամի նկատմամբ ունի 90 օր և ավելի ժամկետանց պարտավորություն:

Հիմնադրամը քննարկման արդյունքում դրական որոշում ընդունելու դեպքում տեղեկացնում է շահառուին և ֆինանսավարկային կազմակերպությանը:

Շահառուի վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը վաղաժամկետ դադարեցվում է հետևյալ հիմքերով՝

- շահառուի դիմումի համաձայն,
- ֆինանսավարկային կազմակերպության հետ կնքված վարկային պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում,
- վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ժամկետում շահառուի կողմից ներկայացված տեղեկություններում անարժանահավատ տվյալներ ի հայտ գալու դեպքում, որոնք հնարավոր չէր պարզել հայտի ուսումնասիրության ընթացքում,
- շահառուի կողմից վարկի մարումների ժամանակացույցով սահմանված պարտավորություններն անընդմեջ (երեք հերթական վճարում) խախտելու դեպքում,
- շահառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման փաստը Հիմնադրամի և/կամ այլ մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա արձանագրելու դեպքում,
- շահառուի գործունեության դադարեցման դեպքում՝ փաստը Հիմնադրամի և/կամ այլ մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա

արձանագրելու դեպքում, բացառությամբ սեզոնային գործունեության, որի ժամանակահատվածը նախապես նշվում է գործարար ծրագրում:

Վարկի տոկոսագումարի սուբսիդավորումը վաղաժամկետ դադարեցնելուց հետո Հիմնադրամը մեկ անգամ կարող է ընդունել վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը **վերականգնելու** մասին որոշում՝ շահառուի դիմումի համաձայն, ֆինանսավարկային կազմակերպության հանդեպ ժամկետանց պարտավորություններ չլինելու դեպքում:

Վարկի առավելագույն գումարը, վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման չափը

Z/ Z	ՏԳՏ խումբ	Գործունեության տեսակ	անշարժ գույքի կառուցում		անշարժ գույքի վերանորոգում		նոր սարքավորումների, տեխնիկայի ձեռքբերում, նոր տեխնոլոգիայի ներդրում		արտադրութ. ամսաթվից մինչև 5 տարեկան սարքավորումների, տեխնիկայի ձեռք բերում		շարժական գույքի, կահավորանքի ձեռք բերում		շրջանառու միջոցների ֆինանսավորում	
			վարկի առավելագույն գումարը /մլն դրամ/	սուբսիդ. չափը /տոկոս/	վարկի առավելագույն գումարը /մլն դրամ/	սՄուբ ս չափը /տոկոս/	վարկի առավելագույն գումարը /մլն դրամ/	սուբսիդ. չափը /տոկոս/	վարկի առավելագույն գումարը /մլն դրամ/	սուբս. չափը /տոկոս /	վարկի առավելագույն գումարը /մլն դրամ/	սուբս. չափը /տոկոս /	վարկի առավելագույն գումարը /մլն դրամ/	սուբս չափը /տոկոս/
1	B08, B09	Հանքագործական արդյունաբերության և բացահանքի շահագործ. այլ ճյուղեր, հանքագործ. արդյունաբեր. հարակից գործ.	x	x	x	x	100.0	60	50.0	40	x	x	x	x
2	C	Մշակող արդյունաբերություն	100.0	50	30.0	40	100.0	60	50.0	40	x	x	50.0	40
3	F	Շինարարություն	x	x	x	x	100.0	60	50.0	40	x	x	x	x
4	G	Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	x	x	10.0	40	x	x	x	x	5.0	40	x	x
5	H49, H50, H51	Ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում խողովակաշարերով, ջրային և օդային տրանսպորտի գործունեություն	x	x	x	x	30.0	60	15.0	40	x	x	x	x
6	H52	Պահեստավորում և տրանսպորտային օժանդակ գործունեություն	100.0	50	30.0	40	50.0	60	25.0	40	x	x	100.0	40
7	I55	Կացության կազմակերպում	100.0	50	30.0	40	x	x	x	x	15.0	40	x	x
8	I56	Հանրային սննդի կազմակերպում	50.0	50	15.0	40	x	x	x	x	10.0	40	x	x
9	J58	Հրատարակչական գործ	x	x	x	x	30.0	60	15.0	40	x	x	x	x
10	J62	Ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործ. համակարգչ. տեխնոլ. բնագավառում	x	x	x	x	10.0	60	x	x	5.0	40	x	x
11	J63	Տեղեկատվական ծառայությունների մատուցում	x	x	x	x	10.0	60	x	x	5.0	40	x	x
12	Q86	Առողջապահություն	x	x	x	x	30.0	60	15.0	40	x	x	x	x
13	S	Սպասարկման այլ ծառայություններ	x	x	5.0	40	5.0	60	2.5	40	5.0	40	x	x

1. ՏԳՏ C խմբի՝ մշակող արդյունաբերության ոլորտի, I55 խմբի՝ կացության կազմակերպման և S խմբի՝ սպասարկման այլ ծառայությունների ոլորտներում Արցախի Հանրապետության շրջանների սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման չափն ավելացվում է 10 տոկոսով:

2. ՏԳՏ I55 խմբի՝ կացության կազմակերպման և I56 խմբի՝ հանրային սննդի կազմակերպման ոլորտներում Ստեփանակերտ քաղաքում գործունեություն իրականացնող ՓՄՁ սուբյեկտներին անշարժ գույքի կառուցման նպատակով տրամադրվող վարկը չի սուբսիդավորվում:

